

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-ԻՆ
ԺԱՄԸ 16:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՀ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
խորհրդի անդամներ՝**

- Վ. Ավանեսյան ՀՀ էկոնոմիկայի նախարար
- Կ. Մինասյան ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
- Գ. Պողոսյան «Գործարար շահերի պաշտպանության ցանց» ՀԿ-ի համակարգող
- Մ. Առաքելյան «Հայաստանի տրանսպորտային առաքողների միություն» ՀԿ-ի նախագահ
- Փ. Թադևոսյան «Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ-ի նախագահ
- Կ. Մարտիրոսյան Երևանի առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն

Մասնակիցներ՝

- Վ. Գաբրիելյան ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
- Ս. Կարայան ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
- Վ. Միրումյան ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
- Վ. Կոխկյան ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
- Ս. Տոնոյան ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
- Ռ. Վարդանյան ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
- Ս. Սարգսյան ՀՀ տարածքային կառավարման նախարարի խորհրդական
- Վ. Կարապետյան «ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի գործադիր տնօրեն
- Գ. Պողոսյան Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար

Կ. Վարդանյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության գործարար միջավայրի բարելավման վարչության պետ
Վ. Ասլանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ
Հ. Ավագյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ
Դ. Հարությունյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ
Ի. Հովհաննիսյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ

1. Նախորդ նիստի արդյունքների ամփոփում

(Գ. Պողոսյան, Վ. Միրումյան, Փ. Թադևոսյան, Վ. Կտիկյան, Հ. Ավագյան, Տ. Սարգսյան)

10. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարար Դ. Սարգսյանին՝ մեկշաբաթյա ժամկետում ՀՀ էկոնոմիկայի նախարար Վ. Ավանեսյանի, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանի և ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի համապատասխան անդամների հետ համատեղ մշակել և ներկայացնել օրենսդրական փոփոխության առաջարկություն, համաձայն որի կսահմանվի՝

ա. շրջանառության հարկի 1 տոկոս դրույքաչափ՝ ձեռք բերվող ապրանքների գծով փաստաթղթերի հաշվառման պահանջի սահմանմամբ, ընդ որում, ըստ ապրանքատեսակների թույլատրելով 10 տոկոսի չափով շեղում.

բ. շրջանառության հարկի 1 տոկոս դրույքաչափի կիրառման ժամանակ հարկային մարմինների կողմից շրջանառության հարկի 1 տոկոսի դաշտում աշխատող ընկերությունների կողմից ձեռք բերված (փաստաթղթերով հիմնավորված) ապրանքաշրջանառության ստուգումների անցկացման և բողոքարկման ընթացակարգը

գ. օրենսդրական փոփոխության առաջարկությունը ներկայացնել Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի հաջորդ նիստի քննարկմանը:

2) առաջարկել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար Գ. Պողոսյանին՝ ներկայացնել տեղեկատվություն այն մատակարարների (խոշոր ձեռնարկությունների) մասին, որոնք հրաժարվում են ՓՄՁ-ներին տրամադրել անհրաժեշտ փաստաթղթերը:

2. Քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածում փոփոխություն կատարելու անհրաժեշտության վերաբերյալ

(Ի. Հովհաննիսյան, Վ. Միրումյան, Տ. Սարգսյան)

4. Քննարկումներից հետո որոշվեց առաջարկել ՎՋԵԲ-ի գործարարության աջակցման գրասենյակի փորձագետ Ի. Հովհաննիսյանին՝

1) ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը քննարկել ՀՀ գլխավոր դատախազության, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությամբ առաջարկված այլ շահագրգռ մարմինների հետ.

2) ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի լրամշակված տարբերակը ներկայացնել Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի հաջորդ նիստի քննարկմանը:

3. Շրջանառության հարկ վճարողի հաշվառումը որպես ավելացված արժեքի հարկ վճարող և դրանից բխող խնդիրների վերաբերյալ

(Փ. Թադևոսյան, Վ. Միրումյան, Վ. Կտիկյան, Տ. Սարգսյան)

4. Քննարկումներից հետո որոշվեց ընդունել ի գիտություն, որ բոլոր այն դեպքերում, երբ տնտեսավարող սուբյեկտն իր տնտեսական գործունեությունը տեղափոխել է ընդհանուր հարկման դաշտ և ցուցաբերել բարեխիղճ հարկատուի վարքագիծ (ժամանակին կատարել է իր հարկային պարտավորությունները)՝ չի կիրառվի օրենսդրորեն նախատեսված (ընթացակարգերի խախտմամբ ԱԱՀ վճարող համարվելու համար) պատժամիջոցները և հարկ վճարողն իր՝ որպես ԱԱՀ վճարող հաշվառելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին հայտարարությանը համապատասխան կշարունակի համարվել ԱԱՀ վճարող:

4. Ռիելթորական կազմակերպությունների համար սահմանված արտոնագրային վճարի չափի վերաբերյալ

(Գ. Պողոսյան, Վ. Կտիկյան, Վ. Միրումյան, Տ. Սարգսյան)

6. Քննարկումներից հետո որոշվեց առաջարկել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար Գ. Պողոսյանին հարցը մեկ

անգամ ևս քննարկել շահագրգիռ մարմինների հետ, և վերջնական առաջարկությունը ներկայացնել Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի հաջորդ նիստի քննարկմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ